Արձանագրություն

ԵՀԽ հայաստանյան միջեկեղեցական բարեգործական Կլոր սեղան հիմնադրամի Տարեկան ժողովի

20 ապրիլի, 2015թ.

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Ներածություն

ԵՀԽ Հայաստանյան միջեկեղեցական բարեգործական Կլոր սեղան հիմնադրամը (ՀԿՍ) ստեղծվել է 1996 թվականին Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցու և Եկեղեցիների համաշխարհային խորհրդի համատեղ նախաձեռնությամբ և Հայ Ավետարանական ու Հայ Կաթողիկե Եկեղեցիների մասնակցությամբ: ՀԿՍ-ն համախմբում է երեք հայ եկեղեցիների, տեղական հասարակական կազմակերպությունների, եկեղեցուն հարող գործընկերների ուժերը՝ միասնաբար պայքարելու երկրի առանցքային սոցիալական հիմնախնդիրների լուծման համար: 2003 թվականի նոյեմբերից կազմակերպությունն ունի հիմնադրամի կարգավիճակ և գրանցված է ՀՀ արդարադատության նախարարությունում «Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հայաստանյան միջեկեղեցական բարեգործական Կլոր սեղան հիմնադրամ» անվամբ: ՀԿՍ ղեկավար բարձրագույն մարմինը պարբերաբար գումարվող Հոգաբարձուների Խորհուրդն է, որը բաղկացած է երեք հայ եկեղեցիների և երկու հասարակական կազմակերպությունների /ներկայումս՝ ԱՄՔՈՐ-ի հայաստանյան առաքելություն և <<Շեն>> ԲՀԿ/ ներկայացուցիչներից: Այն հրավիրվում է պարբերաբար՝ քննարկելու ՀԿՍ-ի ռազմավարությանը, քաղաքականությանը, ծրագրային և ֆինանսական գործունեությանը վերաբերող հարցեր:

ՀԿՍ-ն իր ամենամյա ժողովներին հրավիրում է տեղական և ոչ տեղական գործընկերների եկեղեցիների ներկայացուցիչների, միջեկեղեցական հասարակական կազմակերպությունների և այլն: Տարեկան ժողովի ընթացքում ներկայացվում են մեկ տարվա գործունեության հաշվետվությունները և հաջորդ տարվա պլանները:

2014 թվականի հաշվետու տարեկան ժողովը տեղի ունեցավ 2015 թվականի ապրիլի 20-ին, Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի Գևորգ Զ Չորեքչյան Կաթողիկոսի անվան միջեկեղեցական կենտրոնում: Ժողովը վարեց ԵՀԽ հայաստանյան Կլոր սեղան հիմնադրամի գործադիր տնօրեն պրն. Կարեն Նազարյանը:

Օրակարգ
ԵՀԽ հայաստանյան Կլոր սեղան հիմնադրամի տարեկան ժողովի

Աղոթք Ներածական խոսք	**Տ. Մարկոս եպս. Հովհաննիսյան** ՀԿՍ հոգաբարձուների խորհրդի նախագահ
Մասնակիցների ներկայացում	**Բոլոր մասնակիցները**
Հայաստանի քաղաքացիական հասարակության զարգացման ժամանակակից տենդենցները	**Կարեն Բեքարյան** §Եվրոպական Ինտեգրացիա¦ ՀԿ տնօրեն
ՀԿՍ 2014-2015թթ.-ի գործունեության մասին: ՀԿՍ գործընկերների ծրագրերի ներկայացում	**Պրն. Կարեն Նազարյան** ՀԿՍ գործադիր տնօրեն **1. Տկն. Հասմիկ Մեթաղյան** Գավառի կրթական համայնքային կենտրոն **2. Տկն. Կարինե Գյուդուկյան** ՀԱԵ Շիրակի թեմի սոց կրթական կենտրոնի կառավարիչ **3. Տկն. Ելենա Հարությունյան** ՀԱԵ ՔԴԿ ծրագրերի համակարգող **4. Օր. Աննա Հովհաննիսյան** §Հիմք¦ Բարեգործական Բնապահպանական ՀԿ **5. Տկն. Օգիտա Ղուկասյան** Ջրվեժի սոց. կենտրոն
ՀԿՍ ֆինանսական քաղաքականությունը և կիրառումը	**Տկն. Էլմիրա Մաղոյան** ՀԿՍ գլխավոր հաշվապահ
Հարց ու պատասխան	
Ամփոփում Ժողովի փակում Աղոթք	**Պրն. Կարեն Նազարյան** **Տ. Մարկոս եպս. Հովհաննիսյան**

1.Աղոթք

2.Ներածական խոսք

ՀԿՍ հոգաբարձուների խորհրդի նախագահ **Տ. Մարկոս եպս. Հովհաննիսյանը ժողովը բացեց աղոթքով** և ողջունեց ներկաներին՝ բոլորին ցանկանալով արդյունավետ աշխատանք: Նա տեղեկացրեց որ սա կլինի նրա՝ ՀԿՍ-ի հետ անցկացվելիք վերջին ժողովը որպես ՀԿՍ հոգաբարձուների խորհրդի նախագահ, քանի որ նա նշանակվել է այլ աշխատանքի:

ՀԿՍ-ի տնօրեն պրն. Կարեն Նազարյանը շնորհակալություն հայտնեց Տ. Մարկոս եպս. Հովհաննիսյանից Հայաստանյան Կլոր սեղան հիմնադրամի հետ տարիներ շարունակ համատեղ արդյունավետ աշխատանքի համար:

3. Մասնակիցների ներկայացում

Այնուհետև **ՀԿՍ տարեկան ժողովի մասնակիցները ներկայացան**:

4. §Եվրոպական Ինտեգրացիա¦ ՀԿ-ի տնօրեն պրն. Կարեն Բեքարյանը շնորհակալություն հայտնեց հրավերի համար և անդրադարձավ իր զեկույցին՝ **§Հայաստանի քաղաքացիական հասարակության զարգացման ժամանակակից տենդենցները: Ինտեգրացիոն գործընթացներ, որպես առաջին և հիմնական էլեմենտ¦:**

Պրն Բեքարյանի զեկույցը նվիրված էր Հայաստանի Հանրապետության Եվրամիությանը /ԵՄ/ և Եվրասիական տնտեսական միությանը /ԵՏՄ/ ինտեգրման գործընթացներին: Իր խոսքի սկզբում նա շեշտեց, որ Հայաստանը պարտավորված չէ ընտրություն կատարել այդ երկու գործընթացների միջև. հարկավոր է փորձել աշխատել երկու կողմի հետ քաղաքական և տնտեսական հարթություններում և հնարավորինս հաղորդակից լինել այն բոլոր օգուտներին, որ կարող է տալ այս գործընթացներից յուրաքանչյուրը:

Անդրադարձ կատարելով Հայաստանի Հանրապետության և Եվրամիության միջև ասոցացման համաձայնագրի կնքման վերաբերյալ եռամյա բանակցություններին՝ պրն. Բեքարյանը դրական գնահատեց դրանց ընթացքը և հիշեցրեց, որ, ՀՀ-ն պատրաստ էր նախաստորագրել ԵՄ-ի հետ ասոցացման պայմանագիրը, սակայն սեպտեմբերի 3-ին ՀՀ նախագահը հայտարարեց Հայաստանի՝ Եվրասիական տնտեսական միությանն անդամակցելու որոշման մասին:

Խոսելով այս քաղաքական որոշման պատճառների մասին՝ պրն. Բեքարյանը ներկայացրեց դրանցից մի քանիսը, մասնավորապես՝ 1) ԵՄ ասոցացման պայմանագրի նախագծում Թուրքիայի հետ բաց սահման ունենալու հեռանկարի բացակայությունը, որը կարելի է բացատրել որպես ԵՄ կողմից Թուրքիայի վրա սահմանի բացման վերաբերյալ լրացուցիչ ճնշում գործադրելու հնարավորության բացառում, 2) Հայաստան-ԵՄ ընդհանուր սահմանի բացակայությունը, այն պարագայում, երբ ՀՀ-ն լարված հարաբերություններ ունի իր չորս հարևաններից երկուսի հետ, այդ թվում նկատի ունենալով նաև վրաց-ռուսական և Իրան-Արևմուտք հարաբերությունների վատթարացման դեպքում Հայաստանի տնտեսական շրջափակման սրման

սպառնալիքը, 3) ԵՄ շուկա մուտք գործելու համար գործող խիստ պայմանները, ներմուծվող ապրանքների և ծառայությունների նկատմամբ կիրառվող բաժնեչափերը, որակի բարձր չափորոշիչները և այլն:

Մյուս կողմից Հայաստանն արդեն ունի լուրջ փորձառություն Եվրասիական շուկայում, որտեղ հայկական ապրանքները որակական առումով չեն զիջում եվրասիական շուկայի արտադրանքին: Նաև Եվրասիական միության անդամ երկրների համար էներգակիրների գները էապես ցածր են, և, ըստ պրն. Բեքարյանի, էներգակիրների գնային այս տարբերությունը Հայաստանի համար որպես Եվրասիական միության անդամ հավասարազոր է կամ գերազանցում է ԵՄ ասոցացման շրջանակներում ստացվելիք գումարները: Ինչ վերաբերում է անվտանգության գործոնին, ապա պետք է նշել, որ ՀՀ-ն Հավաքական Անվտանգության Պայմանագրի կազմակերպության անդամ-երկիր է, ինչպես ԵՏՄ-ի անդամ բոլոր երկրները:

Քաղաքացիական հասարակություն և ինտեգրացիոն գործընթացներ:
Առաջին հայացքից կրոնական կառույցների դերը և նշանակությունը այս հարցում կարող է թվալ սահմանափակ, սակայն դա այդպես չէ:
Քանի որ քաղաքացիական հասարակությունը Եվրասիական միության շատ երկրներում որպես այդպիսին զարգացած չէ, այս պարագայում որոշիչ դեր են խաղում գիտության ներկայացուցիչները և Եկեղեցին: Հայաստանի դեպքում նույնպես Եկեղեցին կարող է մեծ աշխատանք կատարել:

Քաղաքացիական նախաձեռնությունների մեկ այլ կարևոր ուղղություն է Լեռնային Ղարաբաղի շուրջ հակամարտության կարգավորման գործընթացը: Այստեղ վստահության մթնոլորտ ստեղծելու հարցում ՀԿ-ները մեծ դերակատարում են ունեցել: Այժմ աշխատանքը դարձել է ավելի դժվար, քանի որ Ադրբեջանը սեփական երկրում խիստ սահմանափակում է նաև խոսքի ազատության իրավունքը:
Մյուսը ձևաչափի հարցն է: Ադրբեջանը դեմ է եռակողմ ձևաչափին, որտեղ աշխատանքի մեջ ներգրավված կլինեն Հայաստանը, Ադրբեջանը և Լեռնային Ղարաբաղը: Իսկ Հայաստանը դեմ է եղել Հայաստան և Ադրբեջան երկկողմ ձևաչափին: Պրն. Բեքարյանը նշեց, որ միջկրոնական երկխոսության և Սփյուռքի ներգրավմամբ բանակցությունների վարման պարագայում ձևաչափի հետ կապված խնդիր չի կարող առաջանալ և կարևորեց Եկեղեցու մասնակցությունը այս ուղղությամբ տարվող աշխատանքներին:

Խոսելով հայ-թուրքական հարաբերությունների մասին, պրն. Բեքարյանն ասաց, որ այս ոլորտում Եկեղեցու մասնակցության մասին լիարժեք պատկերացում չկա: Սակայն այս պարագայում ուշադրությունը կարելի է սևեռել այն ուղղությամբ, որ Թուրքիան վարում է իր երկրում հասարակական կարծիքի ձևավորման քաղաքականություն: Այս պարագայում հայկական կողմը պետք է նույնպես փորձի ազդել թուրքական հանրության վրա: Անհրաժեշտ է հնարավորինս լայն մաշտաբով իրազեկել թուրքական հանրությանը տիրող իրավիճակի, ցեղասպանության և այլ խնդիրների մասին:

Պրն. Բեքարյանն առանձնացրեց նաև այն հասարակական խմբերը, որոնց դերը և նշանակությունը առավել կարևոր են նշված խնդիրների համար. այն է՝ ՀԿ-ները, երիտասարդությունը և զանգվածային լրատվամիջոցները:

5. ՀԿՍ-ի 2014-2015 թթ գործունեության մասին: ՀԿՍ գործընկերների ծրագրերի ներկայացում

Պրն. Կարեն Նազարյանը անդրադարձավ ՀԿՍ-ի մի կարևոր ծրագրի՝ ներկայացնելով ՀԿՍ-ի կողմից Սիրիայում 2014թ.-ին իրականացրած աշխատանքին: Նա շեշտեց, որ այն հնարավոր եղավ իրականացնել շնորհիվ Հայ Առաքելական Եկեղեցու Դամասկոսի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Արմաշ եպս. Նալբանդյանի, և իրականացման գործընթացում կարևորեց ՀԿՍ-ի ու Հայ Առաքելական Եկեղեցու համագործակցությունը:
ACT Alliance-ը, որի անդամ է ՀԿՍ-ն, աշխատում է արտակարգ իրավիճակների ոլորտում՝ աջակցություն ցուցաբերելով աղետյալներին: Ծրագիրն իրականացնելու համար ՀԿՍ-ն դիմել է ACT Alliance-ի արագ արձագանքման ծրագրին՝ օգնելու Սիրիայի Քեսաբ բնակավայրում կատարված իրադարձությունների հետևանքով տուժած հայերին: Ծրագրի իրականացման չորս փուլերն են. կարիքների գնահատումը, անհրաժեշտ ապրանքատեսակների ձեռքբերումը, բաշխումը և հաշվետվությունները: Կարիքների գնահատման համար կատարվել է ճանապարհորդություն դեպի Բեյրութ, Դամասկոս, Հոմս, Լաթակիա և Քեսաբ:

Պրն. Նազարյանը պատմեց Քեսաբ կատարած այցի մասին, նաև ցուցադրեց այնտեղ տեղի ունեցած իրադարձությունների հետևանքով ավերված քաղաքի լուսանկարները: Քեսաբում ավերված ու թալանված էին շենքերը, եկեղեցիները, խանութները, հյուրանոցները և այլ հաստատություններ, ավերված էին նաև քաղաքի շրջակա բնակավայրերը: Քեսաբից տեղահանված բնակչությանը ըստ ընտանիքների անդամների թվի տեղում բաշխվեց ձեթ: Հետագայում նրանց տրամադրվեցին նաև գազի բալոններ և սնունդ, քանի որ արագ արձագանքման ֆոնդով կարելի էր գնել միայն սնունդ և առաջին անհրաժեշտության պարագաներ: Աշխատանքներն իրականացվել են Հայ եկեղեցու և նրա հետ սերտ համագործակցող Քեսաբի շտապ օգնության կոմիտեի հետ:

6. ՀԿՍ-ի գործընկերների ծրագրերի ներկայացում

Առաջինը իր զեկույցով հանդես եկավ **ՀԱԵ Գեղարքունյաց թեմի Գավառի Համայնքային-կրթական կենտրոնից տկն. Հասմիկ Սեթաղյանը:**
Տկն. Սեթաղյանը տեղեկացրեց, որ կենտրոնը հիմնադրվել է 2010 թվականին: Մինչև 2010 թ.-ը այն եղել է կիրակնօրյա դպրոց, սակայն ՀԿՍ-ի հետ համագործակցությունից հետո ընդլայնել է իր գործունեությունը: Այսօր կենտրոնն իրականացնում է կրթական, հոգևոր, տնտեսական հզորացման, բնապահպանական, սոցիալական և մարդու իրավունքների ծրագրեր:
Կենտրոնի աշխատանքների շարունակականությունը ապահովելու համար 2014 թ.-ին, ՀԿՍ-ի հետ միասին, մշակվել է կենտրոնի կայունության պլանը, որի համաձայն իրականացվում են նաև վճարովի ծառայություններ, ինչպես օրինակ՝ վարձակալության

են տրվում սենյակներ, կազմակերպվում են տիկնիկային թատրոնի վճարովի ներկայացումներ, կատարվում է ձեռքի աշխատանքների ու շրջանին բնորոշ խմորեղենի վաճառք: Կայունության պլանի համաձայն կենտրոնը համագործակցում է նաև ՏԻՄ-երի և քաղաքի մի շարք կառույցների հետ: Ինչ վերաբերում է կարողությունների զարգացմանը, որը կայունության կարևոր մաս է, տկն. Սեթաղյանը նշեց, որ կենտրոնի աշխատակազմը մասնակցել է ՀԿՍ-ի կողմից կազմակերպված տարբեր դասընթացների՝ 2014-15 թթ. WEB ծրագրավորման, և §Ծրագիր-առաջարկ մշակելու¦: Կայունության պլանի մաս են կազմում նաև կենտրոնի կազմակերպած արհեստների և արվեստների ուսուցումները, որոնցով ապահովվում է շահառուների սոցիալական և տնտեսական առաջընթացը, կենտրոնի շարունակական աշխատանքներին նպաստում է նաև կամավորների աշխատանքները: Կենտրոնի գործունեությունը լուսաբանվում է տեղական ԶԼՄ-ների կողմից:

Կենտրոնում գործում են համակարգչային գրագիտության, ազգային խոհանոցի, թաղիքագործության, խմորեղենի պատրաստման, անգլերենի ուսուցման, փայտի փորագրության, հելունագործության և ուլունքագործության, գորգագործության, մակրամեի, գեղանկարչության ու երգեցողության դասընթացներ: Կազմակերպվում են ազգային խմորեղենի, տիկնիկների պատրաստում և վաճառք: Ընդունվում են տոնական բացիկների պատրաստման պատվերներ:
Բնապահպանական ծրագրերի շրջանակներում երիտասարդների կողմից կազմակերպվում են բնապահպանական սեմինարներ և եկեղեցիների շուրջ մաքրման աշխատանքներ:
Սոցիալականացման ծրագրերի շրջանակներում կազմակերպվում են ուխտագնացություններ, միջոցառումներ, ցուցահանդեսներ, նկարչական խմբակի էտյուդներ, երիտասարդական հանդիպումներ, փառատոներ և տիկնիկային թատրոնի հյուրախաղեր: Ցուցահանդեսները կազմակերպվում են ինչպես Գավառում, այնպես էլ Գավառից դուրս: Ամբողջ տարվա ընթացքում իրականացվեն միջոցառումներ՝ նվիրված Կոմիտասին և Արշիլ Գորկուն, ինչպես նաև Սուրբ Զատիկի, Խաչվերացի տոնի և ցեղասպանության տարելիցի վերաբերյալ: Երեխաներն ամեն տարի Սուրբ Սարգսի տոնին պատրաստում են բացիկներ և Գավառի Սուրբ Աստվածածին եկեղեցում բաժանում են երիտասարդներին: Այցելություն է կատարվել Գավառի հատուկ դպրոց, ինչպես նաև մասնակցություն է եղել Չինարի գյուղի համար պատրաստվող նվերների փաթեթների ակցիային: Անապահով 500 երեխա ՀԿՍ-ի ծրագրով ստացել են ամանորյա նվերներ, իսկ 30 երեխա՝ տաք հագուստ:
Կենտրոնում իրականացվում է նաև մարդու իրավունքների ծրագիր, որի շրջանակներում կազմակերպվում են դասընթացներ երեխաների և երիտասարդների համար:

Հաջորդ զեկույցը նվիրված էր **ՀԱԵ Շիրակի թեմի սոցիալ-կրթական կենտրոնին՝ ներկայացված կենտրոնի կառավարիչ տկն. Կարինե Գյուդուկյանի** կողմից: Շիրակի թեմի սոցիալ-կրթական կենտրոնի գործունեության հիմնական ուղղություններն են՝

- կրթամշակութային, որում ներգրավված է 530 շահառու
- սոցիալական, որում 2014 թվականին ներգրավված է եղել 1081 շահառու
- երիտասարդական՝ 2500 շահառու

Կենտրոնում աշխատում են 24 հիմնական աշխատակից, 5 ծրագրային, 9 ուսուցիչ և 50 կամավոր:

Արտադպրոցական ուսուցման ծրագրով գործում են լեզուների, համակարգչային, պարարվեստի, կիթառի դասընթացները, թատերական ստուդիան և նախակրթարանը:

Նախորդ տարիներին շատ ավելի լայն է եղել արտադպրոցական կրթությունը, սակայն այս տարի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից բացվել է Հայորդաց տունը, որն ունի մեծ հնարավորություններ և իրականացնում է նույն գործառույթը: Այս պարագայում կենտրոնն ավելի շատ աշխատանք է ծավալում մեծահասակների կրթության ծրագրերի ուղղությամբ, և 2014 թվականին կենտրոնը ունեցել է համակարգչային, գործավարության, հաշվապահության, գործնական նամակագրության, թխվածքների պատրաստման և ձևավորման ու վարսահարդարման դասընթացներ: Մեծ պահանջարկ են վայելում նաև կենտրոնի կողմից իրականացվող ամառային մշակութային ճամբարները, որոնք անապահով ընտանիքների երեխաներին հնարավորություն են տալիս լավ և արդյունավետ կազմակերպել իրենց ժամանցը: Այս ճամբարներում ամեն շաբաթն ունի իր թեմատիկան, և Գյումրիի լավագույն մասնագետները կամավոր մասնակցում են դրանց աշխատանքին:

Սոցիալական աշխատանքի արդյունքներներից են՝ 99 հետազոտական տնայց, խորհրդատվություն (115 ընտանիք), ուղղորդում (122 ընտանիք), միջնորդում (15 ընտանիք), հոգևոր, սոցիալ-հոգեբանական աջակցություն (40 ընտանիք), արագ արձագանքում (6 ընտանիք), հումանիտար օգնություն և աջակցություն:

Երիտասարդական ծրագրերից են կրթական, մշակութային գործունեությունը, ակումբային գործունեությունը (Cinema-Club, Training Club -100-120 երիտասարդների մասնակցությամբ), ուխտագնացությունները, <<Հույս, Հավատ, Սեր ծրագիրը>> (նպատակն է մարզի եկեղեցիների բարեկարգումը), կամավորական բարեգործական ծառայությունը (<<Մեկ բացիկ մեկ բնակարան>> ծրագիր, որի շնորհիվ 2 անապահով ընտանիք բնակարան ստացան) և ժամանցի կազմակերպումը:

Երիտասարդները կապ են պահպանում նաև սփյուռքի երիտասարդության հետ: Կազմակերպվում են համաքաղաքային և մարզային երիտասարդական միջոցառումներ՝ հոգևոր և աշխարհիկ տոների նշում, ակցիաներ, փառատոներ, ցուցահանդեսներ և ֆլեշմոբեր:

Կենտրոնն ունի նաև սոցիալական ձեռներեցության ծրագիր: Գործում են կարի արհեստանոցը (ունեցել է 3 082 640 դրամ եկամուտ 2014թ.-ին), կահույքի արհեստանոցը (ունեցել է 2 413 680 դրամ եկամուտ 2014թ-ին) և տպարան (ունեցել է 974 470 եկամուտ 2014թ.-ին):

Կենտրոնի կառավարիչ տկն. Գյուդուկյանը նշեց այն կազմակերպությունները, որոնց հետ համագործակցում է ՀԱԵ Շիրակի թեմի սոցիալական կրթական կենտրոնը: Դրանք են.

- ԵՀԽ հայաստանյան միջեկեղեցական բարեգործական Կլոր սեղան հիմնադրամ
- DVV International
- IOCC
- Շիրակի մարզպետարան
- Գյումրու քաղաքապետարան
- ԲՈՒՀ-եր
- Շիրակի մարզի կրթության, սպորտի և մշակույթի վարչություն
- Գյումրու զբաղվածության մարզային կենտրոն
- §ՑԱՅԳ¦, §ԳԱԼԱ¦, §Շանթ¦, §Շիրակ¦հեռուստաընկերություններ
- Միջազգային և տեղական հասարակական կազմակերպություններ
- §Արևամանուկ¦ հիմնադրամ
- Հայկական Կարիտաս
- Վորլդ Վիժն Հայաստան

Տարին հագեցած է եղել նաև փոխադարձ ուսումնական այցերով, որի ընթացքում կատարվել է փորձի փոխանակում:

ՀԱԵ Շիրակի թեմի սոցիալ-կրթական կենտրոնը ԵՀԽ հայաստանյան Կլոր սեղան հիմնադրամի հետ իրականացնում է §Դու մենակ չես¦ ծրագիրը: Ծրագրի շրջանակներում կանանց տնտեսվարությամբ 60 ընտանիքներում կատարվել է ուսումնասիրություն, կարիքի գնահատում, սոցիալական նկարագրերի կազմում, խնդիրների լուծման ռազմավարության մշակում և իրականացում: Կանանց հետ աշխատանք է տարվել՝ հաշվի առնելով նրանց սոցիալական և հոգեբանական դժվարությունները: Ըստ կատարված հարցումների, կանանց մեծ մասը պատրաստ չէ միայնակ հոգալ ընտանիքի խնդիրները: Ըստ այդմ, որոշվեց օգնել կանանց ձեռք բերել այնպիսի մասնագիտություններ, որոնք տալիս են հնարավորություն աշխատելու տանը:
Ընդլայնվել է Երեխաների խնամքի ցերեկային կենտրոնը (15-20 երեխա): Ծրագիրն ի սկզբանե նախատեսված է եղել ծնողազուրկ երեխաների համար, սակայն այստեղ ընդգրկված են նաև միայնակ մայրերի երեխաներ: Այստեղ տրամադրվում են անհրաժեշտ կրթական, սոցիալական, հոգեբանական ծառայություններ, հումանիտար օգնության, ծնողներին մասնագիտական կրթություն ստանալու հնարավորության, ծնողավարության դասընթացներ, խմբային և անհատական խորհրդատվություններ:
Կենտրոնում գործում է նաև տարեցների զբաղվածության և ժամանցի ցերեկային կենտրոնը (20-30 տարեցներ): Իրականացվում է սոցիալ-հոգեբանական աշխատանք տարեցների հետ, ժամանցի կազմակերպում, ինչպես նաև հումանիտար օգնության տրամադրում:
ՀԱԵ Շիրակի թեմի սոցիալ-կրթական կենտրոնը ՀԿՍ-ի աջակցությամբ երկու տարի է իրականացնում է §Պարգևենք ուրախ Ամանոր¦ ծրագիրը: Ծրագրի շրջանակներում տրամադրվել են հագուստ, սնունդ և կազմակերպվել են միջոցառումներ կենտրոնի շահառուների համար:

Զեկույցով հանդես եկավ նաև **ՀԱԵ ՔԴԿ ծրագրերի համակարգող տկն. Ելենա Հարությունյանը** և ներկայացրեց «Հոգևոր աջակցություն ընտանիքներին» ծրագիրը:
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնը ՀԿՍ-ի հետ համագործակցությամբ և ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի աջակցությամբ, 2011թ.-ից սկսյալ, իրականացնում է «Հոգևոր աջակցություն ընտանիքներին» ծրագիրը, որի նպատակն է ընտանիք-դպրոց-եկեղեցի փոխգործակցության միջոցով նպաստել ընտանեկան հիմնախնդիրների հաղթահարմանը և, հատկապես, ուղենշել բռնություններից խուսափելու հոգևոր ճանապարհը:
Ծրագրի նախապատրաստական փուլում՝ 2010թ. դեկտեմբերին, կազմակերպվել է քահանաների համաժողով, որին մասնակցել են Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հայաստանյան թեմերի շուրջ 30 քահանաներ: Համաժողովի զեկուցումները անդրադարձել են «գենդերային բռնություն» երևույթին, այդ առումով Հայաստանում տիրող իրավիճակին, առկա խնդրի հաղթահարման հոգևոր ճանապարհներին, իսկ գործնական հատվածում՝ մասնակիցներին փոխանցվել է լսարանների հետ աշխատանքի գործնական հմտություններ: 2011թ. ապրիլ ամսին մեկնարկել է բուն ծրագիրը՝ որպես ուղղություն ունենալով «Ընտանեկան բռնության հիմնախնդիրը և կանանց իրավունքները»: Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տարածաշրջանային պատասխանատուները, ովքեր համակարգում են կենտրոնի գործունեությունը ՀՀ մարզերում, ձեռք են բերել պայմանավորվածություն դպրոցների տնօրենների հետ՝ կազմակերպելու քահանայի հանդիպումները և թեմատիկ շարունակական զրույցները ծնողական լսարանների հետ: Այսպիսով, ապրիլ-մայիս ամիսներին 17 տարածաշրջանների (Երևան, Արարատ, Արտաշատ, Մասիս, Էջմիածին, Աբովյան, Հրազդան, Աշտարակ, Ապարան, Սևան, Եղեգնաձոր, Ջերմուկ-Վայք, Վանաձոր, Գյումրի, Արթիկ և Բերդ) 55 դպրոցներում քահանաները 3-5 հանդիպում և թեմատիկ զրույց են ունեցել ծնողական լսարանների հետ (ընդհանուր առմամբ ծրագրին մասնակցել են շուրջ 6000 անձ):

Հաշվի առնելով նախորդ տարվա արդյունքները և ծրագիրն ավելի նպատակային ու վերահսկելի դարձնելու կարևորությունը՝ 2012թ.-ին ծրագրի իրականացման համար ընտրվել են ՀՀ 10 տարածաշրջաններ: Ծրագիրն ընթացել է երկու հիմնական փուլերով՝ մայիս-հունիս և սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին: Եթե առաջին փուլում քահանաները 45 դպրոցներում թեմատիկ բանախոսություններով ներկայացել են ծնողական լսարաններին (շուրջ 2500 անձ), ապա երկրորդ փուլում ծրագրի ձևաչափը մի փոքր այլ բնույթ է ստացել՝ որպես շահառու դիտարկելով դպրոցների բարձր դասարանների աշակերտներին՝ կարևորելով խնդրի արծարծումը դեռահասների շրջանում՝ մասնավորաբար նկատի ունենալով այդ ժամանակահատվածում ավագ դպրոցներում տեղ գտած բռնարարքները (դանակահարության դեպքեր Ֆանտան գյուղում, Էջմիածնում և այլն): Այս ձևաչափով ծրագիրն իրականացել է 62 ավագ դպրոցներում՝ շուրջ 5000 աշակերտների մասնակցությամբ:
Ծրագրի ադյունավետությունը գնահատելու համար՝ շահառուներին ծրագրի մեկնարկից առաջ և ավարտին տրամադրվել են գենդերային խնդիրների վերաբերյալ նրանց

պատկերացումներն ու դիրքորոշումները բացահայտող հարցաթերթեր, որոնց վերլուծությունը փաստել է ծրագրի դրական ազդեցությունը գրեթե բոլոր տարածաշրջաններում:

2013թ. նույնպես ծրագիրն իրականացվել է երկու հիմնական փուլով՝ մայիս-հունիս և սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին: Հաստատելով յուրաքանչյուր դպրոցում մեկական հանդիպում ծնողական և երեքական հանդիպում աշակերտական լսարանի հետ ձևաչափը՝ առաջին փուլում ծրագիրն իրականացվել է 10 տարածաշրջանների 11 դպրոցներում՝ շուրջ 1000 անձանց ներգրավմամբ, երկրորդ փուլում՝ 29 դպրոցների շուրջ 3000 շահառուների հետ, ում բաշխվել են նաև թեմատիկ թերթոններ:

2014թ. ծրագրի մեկնարկից առաջ քննարկվել է Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի աշխարհիկ աշխատակիցների ներգրավումը ծրագրին՝ որպես դասընթացավարներ, մշակվել է քահանաների հետ զուգահեռ աշխատանքի մոդուլը՝ ուղենիշ ունենալով կարծրատիպային խոչընդոտող մտածողությունից զերծ ընտանեկան առողջ հարաբերությունների ձևավորմանը նպաստելը: Բուն ծրագիրն իրականացվել է նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին:
Հոգևորականի և աշխարհիկ դասընթացավարի զուգորդված աշխատանքի արդյունավետությունը հիմք է հանդիսացել՝ ընթացիկ տարում ևս կիրառելու նշյալ ձևաչափը:
Ըստ գրաֆիկական հաշվարկների, թվային առումով ծրագիրը թվում է նվազման միտում ունի, սակայն դա արվել է որակական աճը ապահովելու համար:

Օր. Աննա Հովհաննիսյանը ներկայաց §Հիմք¦ Բարեգործական Բնապահպանական ՀԿ-ի գործունեությունը: §Հիմք¦ Բարեգործական Բնապահպանական ՀԿ-ի անդամները մինչև 30 տարեկան երիտասարդներ են: Ծրագրերը իրականացվում են Արագածոտնի մարզի մի քանի համայնքներում՝ մեծամասամբ Բյուրականում: Իրականացվում են դասընթացներ, ծառատունկեր, ակտիվացնող խաղեր, եկեղեցիների մաքրման աշխատանքներ և առողջ ապրելակերպի վերաբերյալ սեմինար քննարկումներ: §Հիմք¦ ՀԿ-ն մասնակցություն է ունեցել մի քանի միջազգային ծրագրերի: Համայնքի մասնակիցները եղել են Լեհաստանի Հանրապետությունում՝ փորձի փոխանակում իրականացնելու նպատակով: Մոլդովայի հետ իրականացվել են երիտասարդության հիմնախնդիրների և գործազրկության թեմայով երկու ծրագիր: Օր. Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ իրենց կազմակերպությունը Գերմանիա ուղարկել է §Բեռլին-Բյուրական. քույր համայնքներ¦ ծրագիր առաջարկ և այնտեղից եկել է դրական պատասխան:
Կարևորվեց այն, որ ՀԿՍ-ի հետ իրականացրած ծրագիրը իրենց կազմակերպության համար մեկնարկային էր, և մեծ փորձ էր կազմակերպության համար: Բյուրականում ծրագիրը սկսել են կարիքի ուսումնասիրությունից, որի արդյունքում պարզ է դարձել, որ ամենակարևոր խնդիրներից է գործազրկությունը: Դրա պատճառներից մեկն էլ կրթության բացակայությունն է: Կազմակերպության երկու անդամ մասնակցություն է

ունեցել ՀԿՍ-ի ծրագրային աշխատանքի ուսուցման երեք մոդուլին: Այս մոդուլների ընթացքում ձեռք են բերվել ահրաժեշտ գիտելիքներ ծրագրային աշխատանքի ոլորտում: ՀԿՍ է ներկայացվել §Ժամանցային արհեստների խմբակի ուսուցում Խրիմյան Հայրիկի կրթօջախում¦ ծրագիրը, որի նպատակն էր լուծել երիտասարդների զբաղվածության խնդիրը:

Ծրագրի շրջանակներում կրթօջախի սենյակներից մեկը վերանորոգվել է, որտեղ անցկացվել են ֆուրշետի և սեղանի ձևավորման դասընթացներ: Շահառուները 16-30 տարեկան կրթություն չստացած, սահմանափակ հնարավորություններ ունեցող ընտանիքների երիտասարդներն էին:

Ծրագրի շրջանակներում իրականացվեց աշխատանքների գնահատում, որի արդյունքում 40 շահառուից ընտրվեց տասը հիմնական մասնակից: Ներկայումս 10 մասնակցից 3-ը ունեն գրանցված աշխատանք, մյուս յոթ մասնակցին §Հիմք¦ ՀԿ-ն տրամադրել է ձևավորման համար անհրաժեշտ գործիքներ: Նրանք, արդեն պատվերներ ունեն: 20-երիտասարդից բաղկացած առաջին խմբի ուսուցման ավարտից երկու ամիս անց նրանք իրենք սովորեցրել են մեկ այլ խմբի՝ արդյունքում ամրապնդելով սեփական գիտելիքները:

Օր. Աննա Հովհաննիսյանն ընդգծեց, որ ամբողջ աշխատանքը իրականացվել է ԵՀԽ հայաստանյան կլոր սեղան հիմնադրամի, համայնքապետարանի աշխատակազմի, ՀԱԵ Արագածոտնի թեմի և բարերար Արարատ Սարգսյանի աջակցությամբ:

Այնուհետև խոսքը տրվեց **§Ջրվեժի Երիտասարդներ¦ կրթամշակութային ՀԿ-ի համակարգչային կենտրոնի պատասխանատու տկն. Օգիտա Ղուկասյանին,** որը ներկայացրեց կենտրոնի գործունեությունը: Ջրվեժի համայնքային կենտրոնի հիմնական նպատակն է բարելավել Ջրվեժ համայնքի սոցիալ-տնտեսական վիճակը, իսկ համակարգչային կենտրոնը նպաստում է դրա իրականացմանը:

ՀԿՍ-ն Ջրվեժի համայնքային կենտրոնին տրամադրել է դրամաշնորհ, որի օգնությամբ կենտրոնը պիտի անցնի ինքնաֆինանսավորման: Այսպիսով, նպատակ կա ապահովել համակարգչային կենտրոնի կայունությունը, դասընթացների միջոցով լուծել երիտասարդների և միջին տարիքի մարդկանց զբաղվածության խնդիրը և ինտեգրել տեղեկատվական տեխնոլոգիաները մեծահասակների շրջանում՝ փոխելով նրանց կյանքի որակը:

Կենտրոնում իրականացվում են տարբեր դասընթացներ: ՀԿՍ-ի հետ համատեղ իրականացվել է համակարգչային գրագիտության մի այլ ծրագիր ևս 50-70 տարեկան անձանց համար: Ծրագիրն ունեցավ մեծ հաջողություն՝ ներգրավելով մոտ 60 տարբեր մասնագիտություն ունեցող շահառուների: Ծրագիրն ավարտվել է, մինչդեռ ուսուցիչները դասընթացները շարունակում են անվճար հիմունքներով:

ՀԿՍ-ի դրամաշնորհի օգնությամբ կենտրոնը համագործակցում է համակարգչային մասնագետ Արմեն Աբաջյանի հետ արդեն երկու տարի: Կենտրոնում անց է կացվում Corel Draw, Adobe Photoshop ծրագրերի ուսուցում երիտասարդների, միջին տարիքի անձանց և երեխաների համար: Կան նաև MS Word, MS Excel, MS Power Point, MS Publisher, Touch Typing, Internet, E-mail, MS Windows ծրագրերերի դասընթացներ:

Երեխաների համար պարբերաբար անց են կացվում անվճար դասեր (Photoshop, Nero, Paint, touch typing, Internet): Եկեղեցական տոներին իրականացվում են նաև համակարգչային ցուցադրություններ և այլն: Աստվածածնի Ավետման տոնին նվիրված բաց դասի ընթացքում երեխաները համակարգչային այս ծրագրերի միջոցով պատրաստել են բացիկներ: Արդեն ավանդույթ է դարձել զատկական համակարգչային միջոցառումը: Նախորդ տարի նախապատրաստական աշխատանքները կատարվել են Paint ծրագրով, իսկ այս տարի արդեն Photoshop ծրագրով:

Տկն. Ղուկասյանը շնորհակալություն հայտնեց ՀԿՍ-ից §Զրվեժի Երիտասարդներ¦ կրթամշակութային ՀԿ-ին սարքավորումներ տրամադրելու համար, որոնց միջոցով հնարավոր է լինում աշխատել և ստանալ եկամուտ: Իրականացվում են հետևյալ համակարգչային ծառայությունները. գունավոր և սև-սպիտակ տպագրություն, սրբագրում, պատճենում, սկան, սկավառակի ձայնագրում, գրքի կազմում, լամինացում (մակաշերտում), այցեքարտերի, բուկլետների պատրաստում և տեքստի մուտքագրում:

Քանի որ կենտրոնը գործում է Զրվեժի եկեղեցու հովանավորության ներքո, համակարգչային կենտրոնը իրականացնում է նաև եկեղեցու բոլոր վարչական աշխատանքները՝ եկեղեցու ամսական օրացույցի կազմում, եկեղեցական տոների թերթոնների պատրաստում, Զատկական, Սբ. Ծննդյան և այլ միջոցառումներ, երեխաների համար ֆիլմի դիտումների կազմակերպում, կայքի պատրաստում և այլն: ՀԿՍ-ն անընդմեջ կազմակերպում է կարողությունների զարգացման դասընթացներ, որոնցից էր նաև կենտրոնի վեբ-կայքի պատրաստման դասընթացը: Տկն. Ղուկասյանն ընդգծեց, որ այդ դասընթացները համարում է շատ արդյունավետ և ուրախալի կլիներ, եթե դրանք շարունակական բնույթ կրեին:

Որպես սոցիալական ձեռներեցության զարգացման ուղի §Զրվեժի Երիտասարդներ¦ ՀԿ-ն ընտրել է համակարգչային կենտրոնը, հրավիրվել է բիզնեսի մոդելավորման մասնագետ: Այժմ կենտրոնը պատրաստվում է համակարգչային գիտելիքների վերաբերյալ սոցիալական հարցում անցկացնել, որպեսզի մատուցվեն ավելի արդյունավետ ծառայություններ:

Կենտրոնը համագործակցում է Զրվեժի երկու դպրոցի հետ, կազմակերպվում են մրցույթներ: Համագործակցություն կա նաև մանկապարտեզի հետ:

Զեկույցի վերջում տկն. Օգիտա Ղուկասյանն առաջարկեց փորձի փոխանակում կազմակերպել ՀԿՍ այլ կենտրոնների հետ:

7. ՀԿՍ ֆինանսական քաղաքականությունը և կիրառումը

ՀԿՍ գլխավոր հաշվապահ տկն. Էլմիրա Մադոյանն իր զեկույցում տեղեկացրեց, որ ՀԿՍ-ն ունի մշակված ֆինանսական քաղաքականություն և, համառոտ ներկայացնելով այդ ուղեցույցի առանձին դրույթներ, ընդգծեց դրա կարևորությունը կազմակերպության ֆինանսական գործունեությունն ավելի ամբողջական և արդյունավետ ծավալելու հարցում: Նշեց, որ ֆինանսական քաղաքականություն ունենալը պարտադիր է այն կազմակերպությունների համար, որոնք ֆինանսավորվում են միջազգային նվիրատուների կողմից, և, ինչպես որ նրանց համար պարտադիր է ունենալ հաշվապահական հաշվառման քաղաքականություն և վարել հաշվապահական

հաշվառումը համապատասխան այդ քաղաքականության, այնպես էլ պարտադիր է ունենալ ֆինանսական քաղաքականություն և ծրագրեր իրականացնելիս և խստագույնս հետևել դրա պահանջներին:
Ֆինանսական ուղեցույցը համապատասխնում է և՛ դոնորների, և՛ ՀՀ օրենսդրության պահանջներին: Տկն. Էլմիրա Մադոյանն ընդգծեց, որ իրականացնելով ՀԿՍ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրեր, յուրաքանչյուր գործընկեր ինքնաբերաբար դառնում է ՀԿՍ-ին ֆինանսավորող կազմակերպության պահանջների կատարողը և խորհուրդ տվեց խստագույնս կատարել այդ պահանջները:
Ֆինանսական քաղաքականության ինը բաժիններից կանգ առավ հատկապես այն կետերի վրա, որոնցում նշված պահանջները գործընկերների կողմից չկատարելը ՀԿՍ համար կառաջացնի մեծ դժվարություններ նվիրատուի հետ հարաբերություններում:
Դրանք համառոտ հետևյալներն են՝

- **Նախահաշվի վերահսկողություն**
  - Կազմել հնարավորինս իրատեսական նախահաշիվ
  - Ծրագիրն իրականացնելու ամբողջ ընթացքում առաջնորդվել դրանով
  - Նշանակալի և չնախատեսված շեղումներ կանխատեսելու դեպքում նախապես դիմել ՀԿՍ՝ գրավոր համաձայնություն ստանալու համար:
- **Ծախսերի վերահսկողություն**
  - 400 եվրոյից մեծ արժեք ունեցող ապրանքի կամ ծառայության ձեռքբերումն իրականացնել նախապես երեք տարբեր մատակարարներից գնահարցում կատարելով: Վերջնական ընտրությունը կատարել դոնորի հետ քննարկելուց հետո:
- **Մարդկային ռեսուրսների կառավարում**
  - Աշխատակցի կամ ծառայություն մատուցողի հիմնավորված ընտրություն,
  - Պայմանագրային հարաբերություններ, աշխատանքի հստակ նկարագիր, ժամկետներ, վճարման կարգ, անձը հաստատող փաստաթղթեր,
- **Հաշվետվություններ և աուդիտ**
  - Ծրագիրն սկսելուց առաջ հաշվետվությունների ձևաթերթերի մանրամասն ուսումնասիրություն:
  - Հաշվետվությունների ՀԿՍ ճիշտ և ժամանակին ներկայացումով նպաստում աուդիտի բարեհաջող կազմակերպմանը՝ խուսափելով ֆինանսավորման կրճատման պատճառ հանդիսանալուց:

Պրն. Կարեն Նազարյանը, ամփոփելով տկն. Էլմիրա Մադոյանի զեկույցը, տեղեկացրեց, որ ՀԿՍ-ն կշարունակի համագործակցությունը միայն այն գործընկերների հետ, ովքեր կհետևեն այս պահանջներին և կաշխատեն ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

8. Հարց ու պատասխան

Ժողովի վերջում պրն. Կարեն Նազարյանը հրավիրեց ներկաներին հարցեր տալ:
Հարց 1. Ո՞ր ժամանակահատվածում է ՀԿՍ-ի համար նախընտրելի ներկայացնել գնային հարցումները, ծրագրի նախահաշիվը կազմելու ժամանակ, թե ծախսը իրականացնելու ժամանակ:

Պատասխան. Շուկան պետք է ուսումնասիրել մինչև նախահաշիվ կազմելը, որպեսզի պարզ լինի, թե ինչ գումարներ են անհրաժեշտ: Սակայն գնահարցումներ կատարվում և ներկայացվում են ՀԿՍ ծախսն անելուց մի քանի օր առաջ:
Հարց 2. Գնահարցում կատարելուց հետո արդյոք պե՞տք է անպայման ապրանքը գնել այնտեղից որտեղ դա ամենաէժանն է, թե կարելի է աշխատել նաև երկար տարիների փորձ ունեցող հուսալի կազմակերպության հետ, որի մոտ ապրանքի գինն ավելի բարձր է:
Պատասխան. Պարտադիր չէ ընտրել ամենամատչելին, պարզապես անհրաժեշտ է ընտրության վերաբերյալ հստակ հիմնավորում ներկայացնել: Եթե այդ հիմնավորումը տրամաբանական և ողջամիտ է, ապա ոչ մի խնդիր չի ծագի:

Առաջարկներ
Առաջարկ 1. Ժողովի մասնակիցներին հետաքրքրեց, արդյոք իրենց կտրամադրվի ֆինանսական քաղաքականությունը:
Պրն. Կարեն Նազարյանն *առաջարկեց*, որ տկն. Մաղոյանը և ՀԿՍ հաշվապահ օր. Անի Անտոնյանը ՀԿՍ գործընկերների համար պատրաստեն հայերեն լեզվով ուղեցույց:
Առաջարկ 2. §Ջրվեժի Երիտասարդներ¦ կրթամշակութային ՀԿ-ի համակարգչային կենտրոնի պատասխանատու տկն. Օգիտա Ղուկասյանն *առաջարկեց*, որ դասընթացավարների մասնագիտական որակավորման վերապատրաստումները լինեն շարունակական (ինտերնետային կայքերի պատրաստման, գրաֆիկական, հաշվապահական ծրագրերին տիրապետելու համար և այլն):
Առաջարկ 3. Տկն. Ղուկասյանն *առաջարկեց* կազմակերպել հանդիպումներ այլ կենտրոնների հետ՝ փորձի փոխանակում կատարելու համար:

9. Ամփոփում, ժողովի փակում
Ամփոփելով ժողովի արդյունքները՝ պրն. Կարեն Նազարյանը շնորհակալություն հայտնեց բոլոր ներկաներից և կարևորեց ՀԿՍ ժողովները՝ նշելով, որ դրանք մտքեր փոխանակելու և իրականացվող կամ իրականացվելիք աշխատանքներին ավելի հանգամանորեն ծանոթանալու հնարավորություն են:

Տ. Մարկոս եպսկ. Հովհաննիսյանը նույնպես շնորհակալություն հայտնեց ներկաներից՝ ցանկանալով նրանց ուժ և եռանդ, որպեսզի հաջողությամբ շարունակեն իրենց աշխատանքը:

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

Հայաստանյան Կլոր սեղան հիմնադրամ՝

Գերաշնորհ Տ. Մարկոս եպս. Հովհաննիսյան, Հոգաբարձուների խորհրդի նախագահ
Պրն. Կարեն Նազարյան, ՀԿՍ գործադիր տնօրեն
Տկն. Կարինե Բաղդասարյան, ծրագրի պատասխանատու
Տկն. Էլմիրա Մադոյան, գլխավոր հաշվապահ
Օր. Անի Անտոնյան, հաշվապահ
Տկն. Ծովինար Ղազարյան, ծրագրի պատասխանատու
Տկն. Անահիտ Թերզիկյան, ծրագրի պատասխանատուի օգնական
Տկն. Ալլա Սարգիսովա, ծրագրի պատասխանատու
Պրն. Ղարիբ Հարությունյան, մոնիթորինգի և գնահատման պատասխանատու
Օր. Կարինե Քոչարյան, ծրագրի պատասխանատու
Օր. Մարիամ Գալստյան, ադմինիստրատիվ քարտուղար
Օր. Սեդա Տոնոյան, Բնակչության և զարգացման հարցերի շուրջ Եվրոպայի և Միջին Ասիայի կրոնական կազմակերպությունների և Միավորված ազգերի բնակչության հիմնադրամի համագործակցության ցանցի քարտուղար

Հրավիրյալներ՝

	Անուն, ազգանուն	**Կազմակերպություն**
1.	Քույր Արուսեակ Սաճոնեան	Տիրամայր Հայաստանի Կուսաստան
2.	Գոհար Գրիգորյան	UMCOR Առաքելության
3.	Հարութ Ներսեսյան	Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցություն
4.	Կարեն Բեքարյան	§Եվրոպական ինտեգրացիա¦ ՀԿ
5.	Տ. Վիգեն քհն. Մանուկյան	ՀԱԵ Արագածոտնի թեմ
6.	Կարինե Գրիգորյան	ՀԱԵ Արագածոտնի թեմ
7.	Տ. Գևորգ քհն. Կրտիկաշյան	ՀԱԵ Արմավիրի Թեմ
8.	Աննա Ղուկասյան	ՀԱԵ Արմավիրի Թեմ
9.	Հասմիկ Մխիթարյան	ՀԱԵ Արմավիրի Թեմ
10.	Ելենա Հարությունյան	ՀԱԵ Քրիստոնեական դաստրիարակության կենտրոն

	Անուն, ազգանուն	Կազմակերպություն
11.	Նարինե Մխիթարյան	§Սբ. Սանդուխտ տիկնանց միություն¦ ՀԿ
12.	Տ. Գնել քին. Մարտիրոսյան	ՀԱԵ Գեղարքունյաց թեմ
13.	Տիգրան Հովհաննիսան	ԷԿԼՕՖ ՈՒՎԿ ՍՊԸ
14.	Քրիստինե Պետրոսյան	ԷԿԼՕՖ ՈՒՎԿ ՍՊԸ
15.	Հասմիկ Սեթաղյան	ՀԱԵ Գեղարքունյաց թեմ
16.	Քնարիկ Գարանֆիլյան	§Ընտանիք և համայնք¦ ՀԿ
17.	Տ. Տարոն քին. Հովհաննիսյան	Վարդենիսի համայնքային կենտրոն
18.	Զեմֆիրա Երանոսյան	Վարդենիսի համայնքային կենտրոն
19.	Օգիտա Ղուկասյան	Ջրվեժի համայնքային կենտրոն
20.	Արտեմիս Լեփեջյան	§Սբ. Սանդուխտ տիկնանց միություն¦
21.	Հովհաննես Մանուկյան	§Բարեպաշտ սերունդ¦ հիմնադրամ
22.	Կարինե Գյադուկյան	Շիրակի թեմի սոցիալ-կրթական կենտրոն
23.	Նառա Մելքոնյան	Շիրակի թեմի սոցիալ-կրթական կենտրոն
24.	Նարեկ Բոցինյան	ԱՇՏԿԱ ՀԿ
25.	Մանուշ Մարալչյան	§Երիտասարդ Տավուշ¦ ՀԿ
26.	Շիրակ Եդիգարյան	§Երկխոսություն և Գործարարություն¦ ՀԿ
27.	Աննա Հովհաննիսյան	§Հիմք¦ Բարեգործական Բնապահպանական ՀԿ
28.	Դավիթ Գզողլյան	Ծափաթաղի գյուղապետարան
29.	Համլետ Ծովյան	Տավուշի մեղվապահական ծրագիր